Նախագիծ
Երկրորդ ընթերցում

Կ-424[48]-04.11.202-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ազգային ժողովի կանոնակարգ» 2016 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-9-Ն սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետից «կամ ծառայողական» բառերը հանել:

Հոդված 2. Օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասից, 17-րդ հոդվածի 4-րդ մասից, 21-րդ հոդվածի 2-րդ մասից և 122-րդ հոդվածի 5-րդ մասից «ծառայողական,» բառը հանել:

Հոդված 3. Օրենքի 88-րդ հոդվածի 6-րդ մասից, 90-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետից, 117-րդ հոդվածի 6-րդ մասից և 118-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետից «և ծառայողական» բառերը հանել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: